

1558

№ 839.

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Բ. Տ Ա Ր Ի

«Եւ ուսումը որդւոց
 «ձերոց խօսել զնոսա ի
 «նոսել ի տան. եւ ի
 «զնալ ի ճանապարհի եւ
 «ի ննջել եւ ի յառնել»:
 V. Մովս. Ժա. 19.

ՀԱՄԱԶԱՆ ԺՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻԺԽՆՈՒԹԵԱՆ

Կ ա ղ ժ ե ց

ՍԱՀԿ ԲԱՀ. ՍԱՀԿԵԱՆՑ

(Մխարան Մոզնոյ Ս. Գեորգ Եկեղեցւոյ)

Յարմար է կրօնուսոյցներին ձեռքի առկ ունենալ
 իմ «Դասագիրք կրօնի» II հատոր մասն ա. և բ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ս. Շարաձեի. || Тип. М. Шарадзе.

1892

БИБЛИОТЕКА
 МНОГОВУЧА
 МОСКОВСКОГО
 АКАДЕМИИ НАУК
 СССР



2(075)

U-15

2(075)

4-15

03 AUG 2009

17206

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Բ. ՏԱՐԻ

„Եւ ուսուցիք որդւոց
„ձերոց խօսել զնոսա ի
„նոսել ի տան. եւ ի
„զնալ ի ճանապարհի եւ
„ի ննջել եւ ի յառնել“:
V. Մովս. ժա. 19.

ՀԱՄԱԶԱՅՆ ԺՐԵԳՐԻ ՀՈԳԵԻՈՐ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ԲԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(Միաբան Մոզնայ Ս. Գէորգ եկեղեցւոյ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ФИЛОСОФИИ
Академии Наук
СССР

Յարմար է կրօնուսուցիչներին ձեռքի տակ ունենալ
իմ «Դասագիրք կրօնի» II հատոր մասն ա. և բ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե || Тип. М. Шарадзе.

1892

25 JUL 2013

1558

Дозволено ценз., Тифлисъ, 29-го Августа 1892 г.



59306.66

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

ՀՐԱՄԱՆԱԻ

ՏԵՂԵԿԱԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

§ 1.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Բեթանացի Մարիամի և Մարթայի եղբայր Ղազարոսը Հիւանդացաւ: Քոյրերը մարդուղարկեցին Յիսուսի մօտ ասելու. «Տէր, նա՛ որին դու սիրում էիր, Հիւանդ է»: Բայց մինչև դեսպանները համբաւ կբերէին, Ղազարոսը մեռաւ:

Յիսուս սիրում էր Մարթային, Մարիամին և Ղազարոսին: Երբ լսեց թէ նա Հիւանդ է, ասաց իւր աշակերտներին, «Եկէ՛ք գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը Հիւանդ է»: Յիսուս դարձաւ Բեթանիա: Արդէն չորս օր էր՝ ինչ գերեզմանի մէջ էին դրել: Ազգականներից շատերը եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ մխիթարելու համար: Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է, գնաց դիմաւորելու, իսկ Մարիամը տանը նստած էր: Մարթան ասաց Յիսուսին. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ: Բայց հաւատացած եմ, Հիմա էլ ինչ որ

Աստուածանից խնդրես, կկատարէ: Յիսուս ասաց նրան. «Գո եղբայրը յարուժիւն կառնէ»: Մարթան ասաց. «Գիտեմ որ յարուժիւն կառնէ վերջին յարուժեան ժամանակ»: Յիսուս կրկնեց. «Ե՛ս եմ յարուժիւնն ու կեանքը, ինձ հաւատացողը եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի, հաւատում ես այս բանին»: Մարթան պատասխանեց. «Այո՛, Տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Քրիստոս՝ Աստուծո՛ւ որդին»:

Եւ երբ այս ասաց, գնաց և թագուն կանչեց Մարիամին և ասաց. «Վարդապետը եկել է և կանչում է քեզ»: Մարիամը երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և եկաւ: Յիսուս դեռ գիւղը չէր մտել: Այն հրէաները, որոնք տանն էին և սգւորներին մխիթարում էին, երբ տեսան որ Մարիամը վեր կացաւ և գնաց, իրանք էլ նրա ետեւից գնացին՝ այնպէս կարծեցին թէ գնում է գերեզմանը լաց լինելու:

Մարիամը երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող հիւրերին տեսաւ լաց լինելիս, սիրտը լցւեց և ասաց. «Ո՛ր դրիք նրան»: Նրանք պատասխանեցին. «Տէր, եկ և տես»: Յիսուս արտասուեց: Հրէաներն ասում

էին. «Տեսէք ինչպէս էր սիրում նրան»: Ոմանք էլ ասում էին. «Մէթէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս գերեզմանի մօտ գնաց և ասաց. «Վեր առէք այդ քարը»: Մեռածի քոյր Մարթան ասաց. «Տէր, արդէն հոտած կլինի, որովհետեւ չորս օրուան թաղած է»: Յիսուսն ասաց. «Չասացի՞ քեզ, եթէ հաւատաս, Աստուծո՛ւ փառքը կտեսնես»:

Քարը վեր առան: Յիսուս աչքերը երկինք բարձրացրեց և ասաց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից, դու ինձ միշտ լսել ես, խնդրում եմ որ այս անգամ էլ լսես, որպէս զի այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»: Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարէ, արի, եկ արտաքս»: Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանով, իսկ երեսը վարշամակով պատած: Յիսուսն ասաց. «Արձակեցէք դրան և թողէք որ գնայ»: Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտ էին եկել, տեսան Յիսուսի արածը և հաւատացին նրան:

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՋԱՐԱԿԱՆԸ

Կենդանութեանց բաշխող Քրիստոս
 Ի Բեթանիա եկաւորեալ այսօր

Բարեկամին Ղազարու
Խնդրէ զկենդանութիւն:

Կեանք բաշխող Քրիստոսը Բեթանիա գա-
լով այսօր (իւր) բարեկամ Ղազարոսին կեանք
պարգեւեց:

Տնօրինաբար արտասուելով
Ընդ Մարիամու եւ ընդ մարթայի
Ողբակցէր եւ որպէս մարդ հարցանէր,
Ո՞ր եղիք զՂազարոս:

Կարեկցաբար արտասուելով՝ Մարթայի և
Մարիամի հետ ողբակցում էր և ինչպէս մարդ,
հարցնում էր. «Ուր դրիք Ղազարոսին»:

Եւ որպէս զԱստուած բարբառով
Յարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն
Եւ զուզընթաց ծայնին մեռեալն
Եկն արտաքս անապական:

Եւ իբրեւ Աստուած խօսքով յարութիւն է
տալիս չորս օրուայ մեռածին և ձայն տալուն
պէս՝ մեռելը դուրս է գալիս անապական մարմնով:

§ 2.

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐ

Հին ժամանակ հրէաների մէջ հարսա-

նիքն այսպէս էր—փեսան չէր գալիս հարսի
մօտ և տուն տանում, այլ՝ հարսանեաց երե-
կոյեան հարսի ընկերուհիներէից տասն կոյս
աղջիկ՝ կէս գիշերին դուրս էին գալիս փեսայի
առաջ՝ հարսի հետ: Աղջիկները ձեռներին ձո-
ղեր էին ունենում ծայրից լապտեր կախած:
Բացի դրանից հետներն ամանով աւելորդ ձէթ
ևս վերցնում էին, որ եթէ փեսան ուշանա-
լու լինի, լապտերի մէջ ածեն: Փեսան էլ իւր
տանից էր դուրս գալիս և ընկերների հետ
միասին գալիս էին հարսի առաջ: Երկու խմ-
բերը պատահում էին իրար փողոցի մէջ:

Այսպէս մի անգամ տասն կոյս աղջիկներ
իրանց լապտերները վեր առան և գնացին փե-
սայի առաջ: Նրանցից հինգը լիմար այսինքն
անգգոյշ էին, իսկ հինգը իմաստուն այսինքն
զգոյշ էին: Յիմարներն իրանց լապտերների հետ
մոռացան ձէթ վերցնել, իսկ իմաստունները
ձէթ ևս առան: Փեսան ուշացաւ—ամենի
քունը տարաւ:

Կէս գիշերին ձայն բարձրացաւ, թէ փե-
սան գալիս է: Բոլոր կոյսերը վերկացան և
լապտերները պատրաստեցին: Յիմարների լապ-
տերների մէջ ձէթ չկար, անցնելու վրայ էր,
ուստի ասացին իմաստուններին. «Զեր ձէթիցը
մեզ էլ տուէք, որովհետև մեր լապտերները

Հանգչում են»։ Իմաստունները պատասխանեցին։ «Մի գուցէ մեզ և ձեզ բաւական չլինի, աւելի լաւ է վաճառականների մօտ գնացէք և գնեցէք ձեզ Համար։

Եւ երբ նրանք ձէթ գնելու գնացին, փեսան եկաւ և պատրաստները նրա Հետ Հարսանիք մտան և դուռը փակեց։ Յետոյ միւս կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, տէր, բաց մեզ»։ Փեսան պատասխանեց և ասաց. «Չմարիտն եմ ասում, որ ես ձեզ չեմ ճանաչում»։

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐԻ ՀԱՐԱԿԱՆ

Իմաստուն կուսանքն
Պատրաստեալ իւղ լապտերաց
Ելին ընդ սուաջ
Երկնաւոր փեսային։

Իմաստուն կայսերը լապտերների համար իւղ վերցնելով՝ դուրս եկան երկնաւոր փեսայի առաջ։

Իսկ յիմարաց կուսիցն
Ունայնացեալ ի յիւղոյն
Անպատրաստ գտան գալստեան փեսային
Շիջեալ լապտերօք։

Իսկ յիմար կոյսերը հետները իւղ վերցրած չլինելով՝ անպատրաստ գտնուեցան փեսայի գալուտեան, որովհետեւ լապտերները հանգած էին։

Վասն որոյ եւ մեք
Պատրաստեցուք իւղ հոգեւոր
Ձի մտցուք ի յառագաստ անաւան փեսային
Վառեալ լապտերօք *)։

Այս պատճառով էլ մեք հոգեւոր իւղ պատրաստենք, որպէսզի վառած լապտերներով կարողանանք մտնել անմահ փեսայի առագաստը (հարսանիքի տունը)։

§ 3.

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Հրէաներից մի քանիսը գնացին փարիսեցիների ալիքն ալդ երկրի գիտնականների մօտ և պատմեցին, թէ ինչպէս Յիսուս Ղազարոսին յարուծիւն տուաւ։ Քահանայապետներն ու փարիսեցիները իոկոյն ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում, եթե այդպէս թող տանք, ամենքն էլ նրան կհաւատան»։ Նրանցից մինը՝ Կայիափա անուանով, որ այն տարուայ քահանայապետն էր, ասաց. «Դուք ոչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտա-

*) Առակի մեկնութիւնը տես իմ «Դասագիրք կրօնի» II. հատ. մասն բ. § 41.

ծում, աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի: Այն օրից սկսած՝ քահանայապետը և փարիսեցիները խորհուրդ արին, որ սպանեն նրան: Այս պատճառով հրաման հանեցին ամեն տեղ, որ ով Յիսուսի տեղն իմանայ, իմաց տայ իրանց, որ բռնեն:

Կրկնել—(ա. տարի երես 17 Յուդա, Ունալուայ, 18. Խորհրդաւոր ընթրիք, պատարագ 21—22. Յիսուս Գեթսեմանի պարտիզում, Յիսուսի մատնութիւնը, Յիսուս քահանայապետի առաջ, Յուդայի մահը 27. Յիսուս Պիղատոսի առաջ և ապա

ՀԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ

Նոր սքանչելիք տեսանեմք այսօր յաշխարհի ի մէջ հողեղինաց. արարածք արարչին սպանութեան խորհին խորհուրդ:

Այսօր աշխարհում՝ հողեղէնների մէջ նոր հրաշք ենք տեսնում—արարածները խորհում են Արարչին սպանելու խորհուրդը:

Որ քանիւ զերկինս եւ զերկիր յոչնէ գոյացուցեալ, վաճառի այսօր դիւրագին ընդ երիտուն արծաթի,

Նա՛ որ երկինքն ու երկիրը խօսքով հաստատեց՝ ոչնչից ստեղծելով, այսօր վաճառուում է դիւրագին—30 արծաթով:

Ո՛վ Յուդաս արտասուելի, երկնաւոր վարդապետին սպանութեան խորհի զխորհուրդ, մատնելով օրինաց, զի խաչեսցի ի մէջ երկրի:

Ո՛հ, լացի արժանի Յուդան երկնաւոր վարդապետի սպանութեան խորհուրդն է խորհում, մատնելով նրան անօրէնների ձեռը, որ խաչուի երկրիս վրայ:

§ 4.

ՈՏՆԱԼՈՒԱ

Կրկնել—(ա. տարի. երես 18 Համապատասխան մասը և ապա

ՀԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ

Արծաթսիրութեամբ մոլեալ Յուդա զիր գմեծ վարդապետին ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր:

Արծաթսիրութիւնով կուրացած Յուդան իւր մեծ ուսուցչին հրէաներին էր մատնում 30 արծաթով:

Ընդ որում ես համբուրեցից, ասէ, զնա
կալարուք. ո՞վ համբոյր նենգութեան, նշան եւ
առիթ մահու:

Որի հետ ես համբուրուեմ, ասում է Յու-
դան, նրան բռնեցէք. ո՞վ խարդախութեան համ-
բոյր, դու նշան եւ պատճառ ես մահուան:

Մերկացաւ յինքենէ զԱստուածային՝ զսուրբ
հոգին եւ զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ
արկաւ զիրեւ:

Յուդան մերկացաւ (հեռացրեց իրանից) աս-
տուածային սուրբ հոգին եւ հագաւ սատանային՝
ինչպէս զգեստ:

§ 5.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄՆ

(Կրկնութիւն)

Ուրբաթ երեկոյեան դէմն էր: Միւս օրը՝
շաբաթ հրէաների զատիկն էր: Եթէ այդ օրը
Յիսուսին խաչի վրայ տեսնէին, հանգիստ
սրտով հաց չէին ուտի, ուստի գնացին Պիղա-
տոսի մօտ եւ խնդրեցին, որ իրաւունք տայ
մարմինը խաչի վրայից վերցնելու: Պիղատոսն
իրաւունք տուաւ:

Զինուորներէյ մինը կամեցաւ ստուգել
Յիսուսի մահը, ուստի գեղարդով խոցեց կողը,

որտեղից իսկոյն արիւն եւ ջուր բղխեց: Սրա-
նից լետոյ Յովսէփ անուկով մի մարդ, որ ծա-
ծուկ աշակերտ էր Յիսուսին, եկաւ Պիղատոսի
մօտ եւ խնդրեց, որ Յիսուսի մարմինն իրան
տան: Պիղատոսը չմերժեց Յովսէփի խնդիրը:
Մի ուրիշ աշակերտ էլ նիկողիմոս անուկով,
եկաւ եւ անուշաՀոտ բաներ բերաւ: Սրանցով
օծեցին Յիսուսի մարմինը եւ կտուով պատե-
ցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր:
Այնտեղ՝ ուր Յիսուսին թաղեցին, մի
պարտեզ կար. պարտեզումն էլ մի նոր գե-
րեզման: Ահա այստեղ դրին Յիսուսի մար-
մինը. դրանը մի մեծ քար գլորեցին եւ գնացին:

ՀԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ

Յովսէփ ճշմարիտ եւ արդար ի Պիղա-
տոսէ հայցէր զհասարակաց զպարգեւատուն,
որ տուաւ մեզ գանձ անկողոյստելի:

Ճշմարիտ եւ արդար Յովսէփը խնդրում է
Պիղատոսից ամենիս պարգև տուողին (Յիսուսին),
որ շնորհակցաւ մեզ (Աստուածանից) որպէս անկո-
ղոյստելի գանձ:

Պատեալ սուրբ կտաւօք զմարմինն տէ-
րունական՝ զարկողն զլոյս որպէս զօթոց որ
զգեցոյց մեզ զգեստ անկողոյստելի:

Սուրբ կառավարող պատերազմ տերունական մարմինը, որի ծածկոյթն է լոյսը և որը հագցրեց մեզ անկողողպտելի (անապական զգեստ):

Նդաւ ինորափոր ի վիմի եւ մատանեաւ կնքեցաւ *) որ զնախաստեղծն կենդանացոյց եւ զմարդկան կապանս մահու ելոյծ:

Դրեցաւ նոր փորուած գերեզմանաբարի մէջ և մատանիքով կնքուեցաւ. նա՛ որ նախաստեղծին (Ադամին) կեանք տուաւ և մարդկանց մահուան կապանքները բանդեց:

§ 6.

ՅԻՍՈՒՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Կրկնութիւն)

Երբ շաբաթ օրն անցաւ, Յիսուսի հետեող կանայքը — Մարիամ Մակլթադենացին և ուրիշները զանազան տեսակ անուշահոտ խնկեր պատրաստեցին, որ կիւրակէ օրը գան և Քրիստոսի մարմինն օծեն:

Նրանք որ եկան, գեռ արեւը չէր ծագել: Կանայքը ճանապարհին ասում էին միմեանց. «Ո՞վ կգլորէ մեզ համար գերեզմանի բերնի մեծ քարը: Բայց երբ մօտեցան, տեսան որ

*) Տես իմ «Դասագիրք կրօնի» II. հատոր մասն բ.

քարը դէն էր ձգած գերեզմանի բերանից: Կանանցից մինը վազեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւս երկուսը գերեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ նստած է աջ կողմում՝ սպիտակ շորերով: Կանայք վախեցան: Երիտասարդն ասաց նրանց. «Ի՞նչ օրոնում էք խաչուած Յիսուսին. նա յարութիւն առաւ. այստեղ չէ. Ի՞նչու էք կենդանին մեռելների մէջ փնտռում: Գնացէ՛ք, ասացէ՛ք նրա աշակերտներին, որ Յիսուս իրանցից առաջ կգնայ Գալիլիա, դուք այնտեղ կտեսնէք նրան»:

ՀԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով՝ Բրիստոս յարեաւ ի մոեկոց:

Կանայք առաւօտեան արշալուսին վաղ գերեզման գնացին ասելով՝ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ:

Նւ յռ նոսա ասէր հրեշտակն, զի ինչորէք գկենդանին ընդ մոեալս, Բրիստոս յարեաւ ի մոեկոց:

Հրեշտակն ասում է նրանց. «Կենդանին մե-

ՏՅՅՕՇ.ՅԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академии Наук
СССР



ռենցերի մէջ խնդու էք որոնում, Գրիստոս մեռելներից յարութիւն առաւ:

Փութացարուք, ով սուրբ կանայք եւ պատմեմեցէք աշակերտացն ասելով՝ Գրիստոս յարեալ ի մեռելոց:

Հապեցէք, ով սուրբ կանայք եւ պատմեցէք աշակերտներին ասելով՝ Գրիստոս մեռելներից յարութիւն առաւ:

§ 7.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից յետոյ Յիսուս Գրիստոս քառասուն օր էլի մնաց երկրիս վրայ իւր աշակերտների մօտ: Սրանից յետոյ Ձիթենեաց լեառը բարձրացաւ աշակերտների հետ. այնտեղ պատուէր տուաւ նրանց եւ ասաց. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք Հօր Աստուծոյ աւետիքին, որ ես ձեզ խոստացել եմ: Դուք զօրութիւն կստանաք երկնքից, երբ սուրբ Հոգին ձեզ վրայ կիջնէ եւ կլինիք իմ վկաները Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում եւ մինչև երկրիս ծայրերը: Ուրեմն գնացէք եւ բոլոր ազգերին ուսուցէք Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ անունով: Ուսուցէք նրանց որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պա-

տուիրեցի: Ով կհաւատայ եւ կմկրտուի, նա կփրկուի, իսկ ով չի հաւատայ, նա կդատապարտուի:

Երբ որ այս ասաց, բարձրացրեց ձեռները եւ օրհնեց նրանց: Օրհնելու ժամանակ բաժանուեց նրանցից եւ երկինք բարձրացաւ: Մի ամպ ծածկեց նրան աշակերտների աչքից: Նրանք երկրպագեցին ու մեծ ուրախութիւնով յետ դարձան Երուսաղէմ եւ ամեն օր տաճարում գովում եւ օրհնում էին Աստուծուն:

Համբարձման տօնը կատարում ենք Ձատկից 40 օր յետոյ:

§ 8.

ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ

Գրիստոսի Համբարձումից յետոյ առաքելները դարձան Երուսաղէմ եւ ամենքը միասին էին: Տասն օրից յետոյ յանկարծակի մի ձայն լսուեց երկնքից՝ սաստիկ փչող քամու նման եւ լցրեց բոլոր տունը, ուր նստած էին: Սրանից յետոյ լեզուներ ելեացին, կարծես կրակ լինէին եւ նստեց ամեն մինի վրայ: Իսկ ոյն ամենքն էլ սուրբ Հոգւով լցեցան եւ սկսեցին զանազան լեզուներով խօսիլ:

Բացի տեղացիներից Երուսաղէմում բնակ-
ւում էին նաև աշխարհիս ամեն ծայրերից ե-
կած աստուածավախ հրէաներ: Երբ երկնքից
իջնող ձայնը լսելի եղաւ, բազմութիւնը եկաւ
և միասին հաւաքուեցաւ, որովհետեւ ամենքն
էլ լսում էին, թէ ինչպէս առաքեալները ու-
րիշ-ուրիշ լեզուներով էին խօսում: Ամենքն էլ
զարմանում և ասում էին իրար. «Ձէ՞ որ այս
խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են. տե-
սէ՞ք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատ-
մում են Աստուծու մեծամեծ գործերը»: Ա-
մենքն էլ զարմանում և մէկը միւսին ասում
էին. «Այս թէ՛նչ պիտի լինի»: Իսկ ոմանք էլ
ծաղր էին անում և ասում էին, «Սրանք հար-
բած են»:

Պետրոս առաքեալի քարոզը: Այն ժա-
մանակ Պետրոսը տեղից վեր կացաւ և սկսեց
խօսել. «Ո՛վ Հրէաստանցիք և Երուսաղէմում
բնակուողներ, լաւ լսեցէ՛ք ինչ որ ես ձեզ ա-
սելու եմ, սրանք հարբած չեն, ինչպէս որ
կարծում էք, որովհետեւ դեռ ևս առաւօտեան
ժամի 3-ն է այսինքն, մեր ժամի 9-ը: Լսե-
ցէ՛ք, ո՛վ իսրայէլացիներ, Յիսուս Նազովրեցուն,
որ Աստուածանից ուղարկուեց և ձեր մէջ հը-
րաշէներ գործեց, դուք առաք, փայտի վրայ

խաչեցիք և սպանեցիք, բայց Աստուած երեք
օրից յետոյ յարութիւն տուաւ:

Ժողովուրդը՝ որ Պետրոսի քարոզը լսեց,
զղջաց իւր սրտում: Շատերը գալիս էին Պե-
տրոսի և միւսների մօտ ու ասում էին. «Ի՞նչ
անենք»: Պետրոսն էլ ասում էր նրանց, «Ապաշ-
խարեցէ՛ք, թո՛ղ ձեզանից ամեն մինը մկրդ-
տուի Յիսուս Քրիստոսի անունով: Ով կմը-
կըրտէ, սուրբ Հոգւոյ շնորհը կընդունէ»: Պե-
տրոսի խօսքերը յօժարութեամբ ընդունո-
ղը, մկրտում էր: Այն օրը երեք հազար հո-
գի մկրտեց:

ՇԱՐԽԱՆ ՀՈԳԵԳԱՍՏԵԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան
Ընդ երկրաւորացս նորոգումն,
Քանզի նորոգողն էից Հոգին սուրբ էջի սուրբ
վերնատունն:

Որով նորոգեցան դասք առաքելոց:

Այսօր երկնայինքն ուրախացան երկնաւոր-
ներիս նորոգման վրայ, որովհետեւ էակներին նո-
րոգող ուրբ Հոգին իջաւ վերնատուն և առա-
քեալների դասը նորոգեց:

Այսօր հողանիւթեայ ընութիւն ցնծայ
Ընդ հօր հաշտութեան,

Քանզի որ եբարձ զհոգին ի մարդկանէ զմարմինն եղելոց *)

Դարձեալ վերստին զնոյն պարգեւէ:

Այսօր մեր հողեղէն բնութիւնը ուրախանում է հայր Աստուծու (մարդկանց հետ) հաշտւելու վրայ, որովհետեւ նա՝ որ խլեց մարդկանցից մարմին դարձած հոգին (նոյի ժամանակ), կրկին անգամ նոյնը (հոգին) պարգևում է (մարմին դարձածներին՝ մարդոց):

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ Ջգալուստ սուրբ Հոգւոյն.

Որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս եւ գերապայծառս, Երգեն ընդ սրովքէս գերեքսրքենին:

Այսօր եկեղեցւոյ մանուկները ուրախութեամբ տօնում են սուրբ Հոգւոյ գալուստը, որի շնորհիւ զարդարեցան լուսափայլ եւ գերապայծառ զգեստներով, (ուստի) երգում են Սրովքէների հետ Երեքսրքենին (սուրբ, սուրբ երգը):

*) Մարդիկ սւրախանում են, որ հայր Աստուծո՞ւ մարդոց հետ հաշտուեց, որովհետեւ նոյի ժամանակ մարդիկ վատացել էին. Աստուծո՞ւ էլ իւր հոգին նրանցից վերացրել էր, իսկ այսօր նոյն հոգին պարգևում է:

§ 9.

Վ Ե Ր Ա Փ Ո Խ Ո Ի Մ Ն

Յիսուս խաչի վրայից ասաց Յովհաննէս առաքեալին, որ իւր մօրը խնամք տանէ: Այն օրից սկսած Մարիամը 16 տարի շարունակ Յովհաննիսի մօտն էր՝ մինչև իւր մահը:

Երբ սուրբ Կոյս Մարիամը մեռաւ, առաքեալները թաղեցին նրան Գեթսեմանում, որտեղ Յուդան Յիսուսին զինուորների ձեռը մատնեց: Աստուածածնի մահուան ժամանակ բոլոր առաքեալները՝ բացի Բարդուղիմէոսից Երուսաղէմումն էին: Երբ Բարդուղիմէոսը Երուսաղէմ եկաւ եւ իմացաւ Տիրամօր մահը, խիստ տխրեց եւ ցանկացաւ տեսնել նրա գերեզմանը: Առաքեալները Բարդուղիմէոսին Գեթսեմանի տարան, բայց որքան զարմացան, երբ գերեզմանը բաց արին եւ տեսան, որ մարմինն այնտեղ չէր, որովհետեւ Յիսուս Քրիստոս Հրեշտակների ձեռով մարմինը երկինք էր տարել այսինքն վ ե Ր ա փ ո խ ե լ է Ր:

Բարդուղիմէոս առաքեալը շատ էր ցաւում, որ չկարողացաւ ո՛չ Տիրամօրն իրան տեսնել եւ ո՛չ նրա մարմինը: Ուստի միւս առաքեալները նրան մխիթարելու համար՝ Աստուա-

ծածնի պատկերն ընծայեցին: Բարդուղիմէոս առաքեալը մի վանք շինեց և այս պատկերն այնտեղ դրաւ:

Մեր եկեղեցին տօնում է այդ օրը՝ երբ Հրեշտակները սուրբ կոյս Մարիամի Մարմինը երկինք տարան այսինքն վերափոխեցին և դրա համար էլ այդ տօնի անունը վերափոխումն է:

Այդ օրը եկեղեցի ենք գնում և խնդրում ենք Աստուածածնից, որ բարեխօս լինի իւր որդի Յիսուս Քրիստոսի մօտ մեր աղօթքը լսելու, դրա համար էլ եկեղեցում երգում ենք:

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ, մայր քրիստոսի, միտո՛ղ զաղաչանս մեր որդւոյ քո եւ աստուծոյ մերոյ:

Ով դու փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր աղօթքը հասցրու քո Որդուն՝ մեր Աստուծուն:

ՀԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի քո Աստուածածին եւ խնդրեմք զանաբաւ զկոսյդ:

Քո առաջն ենք ընկնում (երկրպագութիւն տալիս) ո՛վ Աստուածածին և աղաչում ենք քեզ՝ անաբաւ կոյսիդ:

Բարեխօսեալ վասն անձանց մերոց եւ աղօթեալ զմիածին որդիդ:

Բարեխօսի՛ր մեզ համար և աղաչի՛ր քո Միածին որդուն:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Որպէսզի աղատէ մեզ փորձութիւնից և ամեն տեսակ վտանգից:

§. 10.

ԱՐԳԱՐ ԹԱԳԱԽՈՐԸ ԴԵՍՊԱՆՆԵՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ:

Հայոց Աբգար Թագաւորը եօթը տարի շարունակ հիւանդ էր. ամեն դեղ գործ էր դրել, բայց ոչինչ չէր օգնում: Այդ ժամանակներումն էր, որ լսեց, թէ Հրէաստանում Յիսուսը ամեն տեսակ հիւանդութիւններ է բժշկում առանց դեղի, ուստի նամակ գրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ գայ և իրան բժշկէ: Ահա Աբգարի գրած նամակը Քրիստոսին. «Ես լսել եմ, որ դու առանց դեղի բժշ-

կում ես հիւանդներին: Ինձ պատմեցին, որ դու կոյրերի աչքը բաց ես անում. կաղերին ոտք ես տալիս. բորոտներին սրբում ես. սատանաներին հալածում ես. երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին բժշկում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս: Երբ ես այս բոլորը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ Աստուծո՛ւ ես՝ երկնքից իջած և կամ Աստուծո՛ւ որդի: Ուստի աղաչում եմ քեզ, որ դաս և ինձ բժշկես: Լսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են. ես մի փոքրիկ քաղաք ունիմ, արի՛ ինձ մօտ, երկուսիս էլ բաւական է: Վերջը պատուիրեց դեսպաններին և ասաց, որ եթէ Յիսուս չըկարողանայ գալ, նրա պատկերը քաշեն և իրան բերեն: Այս բանի համար առանձին նկարիչ ուղարկեց:

Դաստառակ: Դեսպանները նամակը Յիսուսին տարան: Յիսուս չկարողացաւ գալ և մեր Աբգար թագաւորին այս պատասխանը գրեց. «Երանի՛ նրան՝ ով ինձ չէ տեսել, բայց հաւատում է: Դրում ես որ քեզ մօտ գամ, չեմ կարող, որովհետեւ ես չեմ եկել հանգիստ կեանք վարելու, այլ՝ չարչարուելու և խաջուելու: Երբ այս բոլորը կատարեմ, վերջացնեմ,

յետոյ հայր Աստուծո՛ւ մօտ պիտի գնամ: Իսկ իմ Համբարձումից յետոյ աշակերտներիցս մինին կուղարկեմ, որ գայ քեզ բժշկէ և քո հրապտակներին էլ կեանք պարգևէ:

Նկարիչը երբ տեսաւ որ Յիսուս չէ գալիս, սկսաւ նրա պատկերը քաշել, բայց չէր կարողանում: Այս որ տեսաւ Յիսուս, նկարչին իւր մօտ կանչեց, մի կտոր մաքուր կտաւ առաւ, երեսին դրաւ և նրա վրայ նկարուեց իւր պատկերը: Յետոյ նկարչին տուաւ, որ Աբգարին տանէ: Այս պատկերը կոչւում է դաստառակ:

§ 11.

ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ

Քրիստոսի Համբարձումից յետոյ եօթանասուն և երկու աշակերտներից մինը՝ Թագէոս անունով Հայաստան եկաւ: Երբ Թագէոսն Աբգարի պալատը մտաւ, թագաւորը երեսի վրայ վայր ընկաւ և երկրպագութիւն տուաւ նրան: Թագէոսը թագաւորին և բոլոր քաղաքացիներին Քրիստոսի վարդապետութիւնը քարոզեց, Աբգարի գլխին ձեռը դրաւ և բժշկեց, նոյնպէս քաղաքի բոլոր հիւանդներին: Այս բանը որ տեսան քաղաքացիք, բոլորն էլ հաւատացեալ դարձան և մկրտեցան:

Ս. Թադէոսը թագաւորի թագ շինող Ադգէին եպիսկոպոս նշանակեց այս նոր հաւատացեալների վրայ, որ հովուէ նրանց: Ս. Թադէոսը սրանով չբաւականացաւ, այլ հրաման առաւ և գնաց Հայաստան՝ թագաւորի քրոջորդի Սանատրուկի մօտ. սրան էլ քարոզեց և իւր մարդկանց հետ միասին բոլորին էլ մկրտեց: Սանատրուկի աղջիկ Սանդուխտն էլ մկրտուեց:

Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնեայ մնաց—հենց Աբգարի մահուանից լետոյ ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսեց հալածել քրիստոնեաներին ու նահատակել: Իւր աղջիկ Սանդուխտին շատ համոզեց որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց չկարողացաւ: Սանդուխտ կոյսը պատասխանեց, որ կուռքերին ոչ մի ժամանակ երկրպագութիւն չեմ տալ, կմեռնեմ, բայց կուռք չեմ պաշտի: Հայրը իւր աղջկան նահատակել տուաւ: Բայց սրանով չբաւականացաւ որովհետեւ Սանդուխտ կոյսը Ս. Թադէոսից էր ուսել քրիստոնէութիւնը, ուստի նրան էլ նահատակել տուաւ: Այսպէս՝ թէ ուսուցիչը և թէ աշակերտուհին լաւ համարեցին մեռնել, քան թէ կուռք պաշտել:

Օ. Թադէոսի մահուանից լետոյ՝ Յիսուսի

աշակերտներից մի ուրիշը ևս եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզէ—սրա անունն էր Բարդուղիմէոս: Սա բերաւ իւր հետ Ս. կոյս Մարիամի պատկերը. Տիգրիս գետի ափին մի վանք շինեց՝ Աստուածածին անունով և այն պատկերն էլ այնտեղ դրաւ:

Ս. Թադէոս և Բարդուղիմէոսը առաջին անգամ եկան մեր երկիրը քրիստոնէութիւնը քարոզելու և լուսաւորելու հայերին, որա համար էլ նրանց անուանում ենք առաջին (նախկին) լուսաւորիչներ: Որովհետեւ այդպիսի գեղեցիկ օրինակ են թողել մեզ համար, ուստի մենք էլ ամեն տարի նրանց անունը լիշում ենք եկեղեցում և տօն կատարում: Այդ օրը երգում ենք

ՀԱՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՑ

Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպը եւ բարձր աշտարակը, ոսկեղէն բաժակը եւ ժիր մատուռակը Հայաստանեայց հարք հոգեւորք Բարդուղիմէոս եւ Թադէոս, բարեխօս լերուք առ տէր վասն անձանց մերոց:

Հայրատունկ այգու (եկեղեցու) հրեղէն պարիսպներ և բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ և ժիր մատուռակներ—ով դուք Հայաս-

տանցիկներն հոգւոր հայրեր՝ Թադէոս և Բարդուղիմէոս, բարեխօս եղէք տիրոջ առաջ՝ մեզ համար:

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա՛ եւ զերկրպագուս անուանդ քու՛մ պահեա՛ ի խաղաղութեան:

Երկնաւոր թագաւոր (Յիսուս) քո եկեղեցին անշարժ պահիր. քո անուան երկրպագութիւն տուողներին խաղաղութեան մէջ պահիր:

§ 12.

Ս. ԳՐԻԳՈՐ (կամ երկրորդ) ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

Անակի հայաստան գալը: Պարսից Արտաշիր թագաւորը մի օր իւր պալատականների հետ այսպէս խօսեց—Ով Հայոց Խոսրով թագաւորին սպանէ, ինչ փառք ու պատիւ էլ ուզէ, կստանայ ինձնից: Անակ անունով միւնը՝ յանձն առաւ Արտաշիրի ցանկութիւնը կատարել: Անակը վերցրեց իւր ընտանիքը, եկաւ Հայաստանի սահմանի վրայ և այնպէս ձեացաւ՝ որպէս թէ Պարսից թագաւորն իրան հալածում է, ուստի պաշտպանութիւն խնդրեց մեր թագաւորից: Խոսրովն Անակին սիրով ընդունեց: Նա այնպէս էր կարծում, որ փախստականը շատ տեղեկութիւններ կհաղորդէ Արտաշիրի զօրքի և նրա բոլոր գործերի մասին,

ուստի Անակին հենց իւր պալատում տեղ տուաւ: Այնուհետև Արտաշիր լրտեսը նրա մասին էր մտածում, թէ ինչպէս սպանէ մեր թագաւորին:

Խոսրովի մահը: Մի օր Խոսրովը որսի գնաց իւր պալատականների հետ. Անակին էլ հետն առաւ: Որսի ժամանակ Անակը Խոսրովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասելու և սրով խփեց, իսկ ինքը ձի նստաւ, սկսեց փախչել, բայց մարդիկ ետեւիցն ընկան և սպանեցին: Խոսրովը դեռ չէր մեռել, որ հրամայեց Անակի ընտանիքը կոտորել: Թագաւորի հրամանը կատարուեց—նրա ընտանիքը սրից անցկացրին, միայն մանուկ Գրիգորին իւր Սօփիա դայեակը փախցրեց և տարաւ Կեսարիա քաղաքը:

Երբ Արտաշիրն լուր հասաւ, թէ Անակն սպանել է Խոսրովին, ուստի մեծ զօրք առաւ և եկաւ Հայաստան, որպէսզի Խոսրովի տունը ջնջէ: Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել: Արտաշիրը մտաւ մեր երկիրը և հրամայեց Խոսրովի ընտանիքը կոտորել: Այդպէս էլ արին: Մի տղայ միայն՝ Տրդատ անունով և սրա քոյր Խոսրովադուխտին կարողացան փախցնել և տարան Հռոմ. քաղաքը:

Գրիգորը Կիսարիայում եւ Հռովմում: Այդ ժամանակում Սօփիան Գրիգորին խնամում էր Կեսարիայում: Փոքր ինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն: Սօփիան ինքը քրիստոնեայ էր, ուստի և փոքրիկ Գրիգորին սովորացրեց, ինչոր հարկաւոր էր քրիստոնէական կրօնի համար: Երբ Գրիգորը չափահաս դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անուէնով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վրդաննէս և Արիստակէս: Սրանից յետոյ Մարիամի համաձայնութեամբ Գրիգորը բաժանուեցաւ կնոջից: Մարիամը կուսանոց մտաւ:

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր Անակը սպանել է Խոսրով Թազաւորին, որի որդի Տրդատը Հռովմումն է, ուստի վեր կացաւ և գնաց այն քաղաքը, որպէսզի իւր մեղաւոր հօր փոխարէն Տրդատի մօտ ծառայութիւն անէ, որպէսզի հօր յանցանքը փոքր ինչ թեթեւացնէ:

Տրդատի քաջագործութիւնները: Խոսրովի որդի Տրդատն էլ Հռովմումն էր մեծանում Դիոկղետիանոս կայսեր մօտ: Երբ հասակն առաւ, զինուորական ծառայութեան մէջ մտաւ: Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նըս-

նել գիտէր և զէնք գործածել: Մի անգամ ձեռով բռնեց եղան եղջիւրը և քաշեց հանեց: Մի անգամ էլ ընկերի հետ կառք էին քշում, ընկերը բռնեց և Տրդատին կառքից վայր ձգեց, բայց Տրդատը ետևից վազեց և կառքից այնպէս բռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գնալ: Մի անգամ էլ Հռովմ քաղաքի Դիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր: Թշնամին մարդ ուղարկեց և այսպէս էր ասում—փոխանակ զօրքով մէկ մէկու հետ կռուենք և ի զուր տեղը մարդ սպանենք, արի՛ ես և դու միասին մենամարտենք—եթէ ես քեզ յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու ինձ յաղթես, մենք ամենքս էլ քեզ հարկ տանք:

Դիոկղետիանոսն այս բանից խիստ վախեցաւ և չգիտէր թէ ինչ անէ: Կայսեր զօրավարներից մէկն ասաց. «Տէր, Թազաւոր, ամենևին մի մտածիր այդ մասին, իմ գնդի մէջ հայոց Թազաւորի ցեղից մի տղայ կայ՝ անուէնը. Տրդատ, նա կարող է քեզ ազատել և Տրդատի մասին շատ բաներ պատմեց: Դիոկղետիանոսն իսկոյն կանչել տուաւ իւր մօտ Տրդատին, Թազաւորական զգեստ հագնել տուաւ. Թազաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ ասել տուաւ, որ նա կայսրն ինքն

է: Միւս օրը թշնամու թագաւորի մօտ մարդ-
ուղարկեց ասելու, որ վաղը իրար հետ մե-
նամարտեն: Երկրորդ օրը՝ Տրդատը ձին նստած՝
քշեց թշնամու կողմը. յարձակուեց նրա վրայ.
բռնեց և Դիոկղիանոսի մօտ բերեց: Կայսրը
չափից դուրս ուրախացաւ: Երբ իմացաւ, որ
իրան ազատողը հայոց թագաւոր Խոսրովի որ-
դին է, թագաւորական զգեստ հագցրեց. գը-
լուխը թագ դրաւ. զօրք տուաւ որ գնայ Հա-
յաստան և իր հօր փոխարէն թագաւորէ:

Տրդատը հասաւ Կեսարիա քաղաքը. իր
հետն ունէր և Գրիգորին: Հայ նախարարները
երբ իմացան, որ իրանց թագաւորի որդին զօր-
քով գալիս է, իրանք էլ եկան. միացան նրա
հետ, որպէսզի պարսիկներին դուրս անեն
մեր երկրից:

Ս. Գրիգորին ձգում են Խոր Վիրապ:
Տրդատը հասաւ Երեզա քաղաքը: Այստեղ էր
գտնւում մեր պապերի պաշտած Անահիտ չաս-
տուածուհին: Իսկոյն զոհ բերին նրան և խնդ-
րեցին որ յաջողութիւն տայ իրանց գործին:
Այստեղ Տրդատը հրամայեց Գրիգորին, որ նա
էլ Անահիտին աղօթք անէ: Բայց որովհետև
Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքերին
երկրպագութիւն տալ: Տրդատը բարկացաւ Գրի-

գորի վրայ, պատիժներ տուաւ և հրամայեց
որ անպատճառ Անահիտի առաջ աղօթէ: Գրի-
գորը մերժեց: Այն ժամանակ թագաւորին
պատմեցին, որ Գրիգորը իւր հօրն սպանող
Անակի որդին է: Տրդատը և՛ս աւելի բարկա-
ցաւ և հրամայեց Գրիգորին խիստ պատիժ
տալ — ասաց որ տանեն Արտաշատ քաղաքի
Խոր Վիրապը ձգեն, որպէս զի այնտեղ սովից
մեռնի: Այս վիրապը լի էր բազմաթիւ օձե-
րով և կարիճներով: Գրիգորն այստեղ 15 տա-
րի մնաց: Մի քրիստոնեայ կին Աստուծու հը-
րամանով ամենայն օր մի մի հաց էր ձգում,
որ Գրիգորն ուտի և չմեռնի:

Տրդատը Հայաստան հասաւ. դուրս ա-
րաւ պարսիկներին և ինքն սկսաւ կառավա-
րել: Թագաւորը կռապաշտ էր, դրա համար
էլ հրաման հանեց, որ իւր տէրութեան մէջ
ուր որ էլ քրիստոնեայ գտնեն, ստիպեն կուռ-
քերին երկրպագութիւն տալ, իսկ եթէ հա-
կառակեն, իսկոյն սպանեն:

§ 13.

ՀՌԻՓՄԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐԸ ՓԱԽ-
ՉՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Այդ ժամանակներում Դիոկղետիանոս կայս-

ըր կամենում էր իւր համար կին առնել: Ամեն կողմ պատկերահաններ ուղարկեց, որ թագուհի լինելու արժանի աղջիկներ գտնեն. նրանց պատկերները նկարեն և իրան բերեն: Այս պատկերահաններից մի քանիսն էլ Հրեուլմ քաղաքի մօտ գտնուող կուսանոցը գնացին: Այստեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անուշը Հռիփսիմէ. սրա պատկերն ուժով քաշեցին և կայսեր տարան: Կայսրը հաւանեց Հռիփսիմէին և ուզում էր նրան թագուհի դարձնել:

Երբ այս բանն իմացաւ կուսանոցի մայրապետ Գայիանէն, բոլոր կոյսերին հաւաքեց և Հռիփսիմէի հետ միասին փախան եկան Հայաստան ու Վաղարշապատ քաղաքի մօտ գրտնուղ մի այգու հնձանում բնակւեցան: Կոյսերից մինը ապակիէ յուլունքներ էր շինում, ծախում էին և սրանով ապրում:

Դիոկղետիանոսը խիստ բարկացաւ կոյսերի փախստեան վրայ. ամեն կողմ մարդ ուղարկեց, որ նրանց գտնեն: Մեր Տրդատ թագաւորին էլ մի նամակ գրեց, որի մէջ ասում էր, եթէ կոյսերին գտնէ, բոլորին էլ սպանէ, Հռիփսիմէին իրան ուղարկէ, իսկ եթէ ցանկանայ, կարող է ամուսնանալ նրա հետ:

Կոյսերի նահատակութիւնը: Տրդատն այս

թուղթն ստանալուն պէս, իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ փնտռեն և գտնեն նրանց: Մի քանի օրից յետոյ կոյսերին գտան: Թագաւորը հրամայեց հնձանը զինուորներով պատել: Պալատից թանկագին շորեր ուղարկեց, որ հագցնեն Հռիփսիմէին և իւր մօտ բերեն, որովհետեւ միտք ունէր նրա հետ ամուսնանալ: Հռիփսիմէն չէր կամենում թագաւորի պալատը գնալ, բայց թագաւորը իւր ծառաներին հրամայեց ուժով բռնեն նրան և պալատ բերեն: Թագաւորի հրամանը կատարուեց—Հռիփսիմէին քաշ տալով մինչև պալատ տարան: Հռիփսիմէն ոչ մի ձեւով չկամեցաւ թագուհի դառնալ. պալատից փախաւ և գնաց իւր ընկերուհիների մօտ. պատմեց նրանց իւր գլխովն անցածը. փոքր ինչ հեռացաւ նրանցից և սկսեց Աստուծուն աղօթել և շնորհակալութիւն անել, որ իրան այդպիսի վտանգից ազատեց: Այդ միջոցին թագաւորի դահիճները՝ ջահերը ձեռներին եկան. գտան Հռիփսիմէին. լեզուն կտրեցին. աչքերը հանեցին և մարմինը կտոր-կտոր արին: Հռիփսիմէից յետոյ սպանեցին նրա 35 ընկերուհիներին մայրապետի հետ միասին:

§ 14.

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՎԻՐԱՊԻՑ

Թագաւորն այս բանի վրա շատ մտածեց, նրա խիղճն իրան տանջում էր, հանգիստ չունէր. քունը չէր տանում: Տրդատը խելագարի պէս՝ վայրենի խողի նման շամբերում թափառում էր: Թագաւորի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր. հրեշտակը սրան երազում եցւեցաւ և ասաց. «Եթէ կամենում էք, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պէտք է վիրապից հանէք. նա միայն կարող է բժշկել»: Խոսրովադուխտն այս երազը նախարարներին պատմեց. նրանք չհաւատացին. ամենևին չէին կարծում թէ Գրիգորը 15 տարի վիրապում կենդանի մնացած կլինի: Երեք անգամ նոյն երազը կրկնուեց, յետոյ հաւատացին: Այնուհետև վիրապի մօտ գնացին, չուանը կախ արին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուրս արի. քո Աստուածը հրամայեց որ քեզ այստեղից հանենք»: Գրիգորը կենդանի էր: Նրան դուրս հանեցին և Վաղարշապատ բերին: Տրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն էին խնդրում: Գրիգորն աղօթեց Աստուծուն և խնդրեց, որ իրան կարողութիւն տայ հիւանդ

Թագաւորին և նրա նախարարներին բժշկելու: Սրանից յետոյ կոյսերի անթաղ մարմինները թաղել տուաւ:

Երկրորդ օրը նախարարները թագաւորի հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ճշմարիտ հաւատը սովորեցնէ իրանց: Գրիգորը շատ ուրախացաւ այս բարի բանի վրայ և 66 օր շարունակ քարոզում էր և ուսուցանում էր նրանց քրիստոնէական հաւատը:

Ս. Գրիգորի կաթողիկոս ձեռնադրուիլը: Սրանից յետոյ Տրդատ թագաւորը Գրիգորին Կեսարիա քաղաքն ուղարկեց, որ այնտեղի Ղևոնդ արք եպիսկոպոսից եպիսկոպոս ձեռնադրուի իբրև Թագէոս առաքելի աթոռակալից. որպէսզի նոր քրիստոնեայ դարձած հայ ժողովրդին սովորեցնեն քրիստոնէութիւնը: Գրիգորը Կեսարիա գնաց. Ղևոնդից եպիսկոպոս այսինքն կաթողիկոս ձեռնադրուեց: Վերադառնալիս Ս. Յովհաննէս Մկրտչի, Աթանազինեայ եպիսկոպոսի մասունքի մի մասն էլ հետն առաւ և շատ քահանաներ վերցնելով հետը՝ դարձաւ Հայաստան՝ Մշի կողմերը: Այդտեղ կռատներ՝ մեհեաններ կային, քանդեց, կռուքերի սեղանները այսինքն բա-

գինները կործանեց և նրանց տեղ եկեղեցի շինեց. Յովհաննէս Մկրտչի մասունքն էլ այնտեղ դրաւ: Այս եկեղեցու անունը Ս. Կարապետ դրաւ, ուր մինչև այսօր էլ անթիւ ուխտաւորներ են գնում:

Տրդատ Թագաւորի մկրտութիւնը: Տըդատը, երբ իմացաւ որ Գրիգորը վերադարձել է Կեսարիայից, դուրս եկաւ նրա առաջ շատ իշխանների հետ ի միասին: Ս. Գրիգորն ամենին էլ 30 օր ծոմ պահել տուաւ. յետոյ Թագաւորին իւր ընտանեացը, իշխաններին և անթիւ ժողովրդեան հետ միասին մկրտեց Յփրատ գետի մէջ: Գրիգորը եօթն օր ևս մընաց այնտեղ և չորս միլիօնից աւելի մարդ մկրտեց,

Ս. Գրիգորը լուսաւորում է Հայաստանը: Սանից յետոյ Ս. Գրիգորը Տրդատին խորհուրդ տուաւ, որ ամեն գաւառի մէջ ուսումնարան բանայ, որպէսզի այնտեղ քահանաներ պատրաստուեն և մնացած հեթանոս Հայ ժողովրդին մկրտեն և հովուեն: Այս ուսումնարաններից մի քանիսում յունարէն և մի քանիսում էլ ասորերէն էին սովորեցնում, որովհե-

տե դեռ ևս Հայերէն գրեր չունէինք:

Բացի սրանից Ս. Գրիգորը 12 եպիսկոպոս ձեռնադրեց Հայոց Համար: Ս. Գրիգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ Հայրապետը՝ կաթողիկոսը: Նա Հայաստանի ամեն կողմերում ուսումնարաններ բաց անել տուաւ, որտեղից ուսումն առածները քահանաներ էին դառնում և հետզհետէ Հայերին քրիստոնեայ դարձնում—մի խօսքով՝ Ս. Գրիգորը մեր երկիրը լուսաւորեց և դրա Համար էլ նրան ասում ենք Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

ՀԱՐԱԿԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Այսօր զիմանալի լուսոյն ծագողն
 ի խաւարի նստելոցս
 Զգրիգոր Սուրբ Հայրապետ
 Եկայք վերապատուեսցուք:

Խաւարի մէջ նստողներիս իմանալի (մտաւոր)
 լոյս տուող Ս. Գրիգոր Հայրապետին՝ եկէք այսօր վերապատուենք:

Այսօր զանապական հոգւոյն պարգեւն
 Բաշխող որդւոց Թորգոմայ
 Յորդիս լուսոյ նովաւ ծնեալք,
 Եկայք վերապատուեսցուք:

Անապական հոգւոյ պարգևները Թորգոմայ
 որդւոցս բաշխողին (և) նրանից (Ս. Հոգուց) լու-

սոյ որդիներ ծնածներս, եկէք վերապատուենք:

Այսօր զաստուածային բանին պատմողն

Ի Հայաստան աշխարհի

Աշակերտեալ նմա մանկունք,

Նկայք վերապատուեսցուք:

Հայաստան աշխարհում Աստուծոյ խօս-
քը քարոզողին, ով նրան աշակերտող մանուկներ,
եկէք այսօր վերապատուենք:

Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք

Ընդ հրեշտակս

Յիշատակի Լուսաւորչին

Փառք ի բարձունս Աստուծոյ:

Այսօր եկեղեցին իւր որդիներանցով հրեշ-
տակների հետ միասին՝ Լուսաւորչի յաշտակի
համար՝ երգում է— «Փառք ի բարձունս Աս-
տուծոյ»:

§ 15.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶԻ ԵՐԱԶՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչը մի անգամ զար-
մանալի տեսիլք տեսաւ: Նա տեսաւ, որ եր-
կինքը բացուեց և սկսաւ լոյս իջնել երկնքից
դէպի երկիրը: Լուսի հետ միասին իջաւ մի
մարդ—միաժին որդին Աստուծոյ—ձեռին բռն-
ած մեծ ոսկէ ուռն՝ չաքուծ: Այս մարդը

սլանալով իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ
տեղը և գետնին մուրճով խփեց: Իսկոյն գետ-
նի տակից՝ անգնդից լսուեցին սարսափելի ձայ-
ներ: Սրանից յետոյ թագաւորի պալատի վրայ
երևաց ոսկէ խարսխ, որի մեծութիւնը մի
մեծ բլրի չափ էր: Այս խարսխի վրայ հրեղէն
սիւն կար. սիւնի վրայ ամպեղէն դմբէթ՝ ե-
կեղեցու նման, իսկ գմբէթի վրայ էլ՝ լուսա-
ւոր խաչ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը զարմացած նա-
յում էր և չգիտէր, թէ ինչ նշանակութիւն
ունին այս բոլորը: Այդ ժամանակ Աստուծոյ
հրեշտակն իջաւ, երկնից և մեկնեց Ս. Գրի-
գորին նրա տեսիլը: Հրեշտակն ասաց—այն
մարդը, որ ձեռին ոսկէ ուռն ունէր բռնած՝
Աստուծոյ որդի Յիսուս Գրիստոսն (Միաժին)
էր. հրեղէն սիւնը Կաթողիկէ եկեղեցին այ-
սինքն հիմնկուայ Եջմիածնի տաճարը, իսկ
լուսաւոր խաչը՝ հայոց քահանայապետութիւնն
այսինքն կաթողիկոսութիւն է: Հրեշտակը յայտ-
նեց, որ այս ուռնով խփած տեղը եկեղեցի
պիտի շինել, որ բոլոր քրիստոնեաների հա-
մար աղօթատուն կլինի և բացի դրանից հայոց
կաթողիկոսի աթոռն այդտեղ պիտի հաստա-
տուի այսինքն հայոց կաթողիկոսներն այդտեղ
պիտի նստեն:

§ 16.

ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Միւս օրը Գրիգորը պատմեց այս տեսիլը Տրդատ թագաւորին, նախարարներին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշտակի ցոյց տուած տեղը քարէ պարսպով շրջապատեն: Ս. Գրիգորն այդ տեսիլը թագաւորին և նրա նախարարներին մկրտելուց առաջ էր տեսել: Երբ թագաւորական տունը և ժողովրդին մըկըրտեց, Վաղարշապատ դարձաւ և Յիսուսի՝ Միածնի իջած տեղում 303 թուին մի եկեղեցի շինեց այն ձևով ինչպէս որ տեսել էր: Այս եկեղեցին առաջ Շողոկաթ էր կոչուում *), որովհետեւ լոյսը այսինքն շողը այդտեղ կաթեց: Այժմ այլ ևս Շողոկաթ չեն ասում, այլ՝ Էջմիածին, որ նշանակում է թէ այնտեղ իջաւ Միածինը՝ Յիսուս Քրիստոսը: Ս. Եկեղեցու շինութեան վրայ աշխատում էին ոչ թէ միայն ժողովուրդը՝ այլև թագաւորն ինքը, Աշխէն թագու-

*) Այժմ ևս Շողոկաթ է կոչուում տաճարի աւագ սեղանը, իսկ միջնակէտը կաթողիկէի՝ իջման տեղ, որի վրայ պատարագ է մատուցանում Էջմիածնայ տօնին և ուրիշ հանգիստաւոր տօներին:

հին, թագաւորի որդին, քոյրը, նախարարներն ու իշխանները: Բացի Էջմիածնից Ս. Լուսաւորիչը ուրիշ եկեղեցիներ էլ շինեց—մինը Գայիանէ կոյսի անունով, միւսը Հռիփսիմէի, որոնցում ամփոփեց նրանց մարմինները. իսկ երրորդը հնձանի տեղում: Հնձանի տեղում շինած եկեղեցին այժմ կոչուում է Շողակաթ:

Ս. Էջմիածինը 303 թուից սկսած բոլոր հայերի մայր եկեղեցին է և քահանայապետական աթոռը—այնտեղ է նստում հայոց կաթողիկոսը:

Էջմիածնի հիմնարկութեան տօնը մեր եկեղեցին տօնում է Հոգեգալստից երկու շաբաթ լիտու:

ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ.

Էջմիածինն ի չօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա
Ձայնք հնչեցին
Սանդարամենտք անդնդոց:

Միածինը (Յիսուս) լուսով պատած իջաւ Հօրից (երկնքից), սանդարամետի (դժոխքի) անդնդից ձայներ լսուեցան

Տեսեալ զլոյս
Մեծ հայրապետին Գրիգորի

Պատմէր ցնծութեամբ
Հաւատացեալ արքային:

Մեծ Հայրապետ Գրիգորը լոյս տեսնելով
ուրախութիւնով պատմում էր հաւատացեալ թա-
գաւորին

Եկայք շինեսցուք
Սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի իսմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի:

Եկէ՛ք լուսոյ սուրբ խորանը (սեղան, եկե-
ղեցի) շինենք, որովհետեւ Հայաստան աշխարհի
մեջ այստեղ լոյս ծագեց մեզ համար:

Բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ
անշարժ պահեա՛ զաթոռ հայկազնեայցս:

Քո վերին զօրքերի (հրեշտակների) բարե-
խօսութիւնով միշտ անշարժ պահիր Հայկազուն-
ների աթոռը (հայոց եկեղեցին՝ Եջմիածինը):

§ 17.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ Ս. ԵԿԵԼԵՑԻՈՅ ՀԱԽԱՏՈՅ
ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հաւատամք ի մի աստուած ի Հայրն ա-
մենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց
և աներևոյթից:

Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդին

Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին,
այսինքն յեութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աս-
տուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծը-
նունդ և ոչ արարած:

Նոյն ինքն՝ ի բնութենէ Հօր, որով ա-
մենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի,
երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մե-
րոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնա-
ցաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մա-
րիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և
զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և
ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ
աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին
մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր:

Հայոց է նովին մարմնովն և փառօք
Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս,
որոյ թագաւորութիւն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և
ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մար-
գարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան,
քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբան:

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական
և առաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն,
յապաշխարհութիւն, ի քաւութիւն և ի թո-
ղութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի
դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց՝

յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտեանս:

Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգի կամ թէ յօջեիցն եղեն, կամ, յալմէ Եռութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին և թէ փոփոխելիք են կամ ալլալելիք՝ զանախիսիսն նշովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով Սրբոյ Երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ալժամ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հաւատում ենք մի Աստուած, ամենակալ Հօրը, երկինքն ու երկիրը, երևելիների և աներևոյթների Ստեղծողին:

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծու որդուն, որ Հայր Աստուածանից է ծնել՝ միածին, այսինքն Հօր էութիւնիցն է:

Աստուած է՝ Աստուածանից, Լոյս է՝ լուսից, Ճշմարիտ Աստուած է, Ճշմարիտ Աստուծուց ծնած և ոչ թէ ստեղծուած:

Նոյն ինքն Հօր (Աստուծոյ) բնութիւնիցն է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրի վրայ, երևելիներն ու աներևոյթները:

Որ մեզ մարդկանցս համար և մեր փրկու-

թեան համար. երկնքիցն իջնելով՝ մարմին առաւ, մարդ եղաւ, և ծնաւ կատարեալ կերպով Սուրբ կոյս մարիամից՝ Հոգւով սրբով:

Որով (Ս. Հոգւով) առաւ մարմին, հոգի և և այն ամենն՝ ինչ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով:

Չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ և նոյն մարմնով երկինք բարձրանալով՝ Հօր աջ կողմը նստաւ:

Պէտք է գայ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանիներին ու մեռածներին դատելու համար, որի թագաւորութեանը վերջ չկայ:

Հաւատում ենք Ս. Հոգւոյն, որ անեղ (ոչ դիւրից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որը խօսեց Օրինաց և Մարգարէների և աւետարանների միջոցով: Որ Յորդանան գետն իջաւ՝ Առաքողին (Քրիստոս) Աստուածանից ուղարկուածին՝ քարոզեց և սուրբերի մէջ բնակեցաւ:

Հաւատում ենք նաև մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի, մի Մկրտութեան, Ապաշխարութեան, Մեղաց բաւութեան ու թողութեան, մեռելների Յարութեան, հոգիների և մարմինների վերջին դատաստանին, երկնքի Արքայութեան և Յաւիտեանական կեանքին:

Իսկ նրանք, որոնք ասում են՝ թէ կար ժամանակ, երբ չկար Աստուծու որդին, կամ ասում են, թէ կար ժամանակ, երբ Ս. Հոգին չկար, կամ ասում են, թէ Աստուծու որդին կամ Ս. հոգին ոչնչից գոյացած և Հօր Աստուծու էութիւն

նից չեն, այլ ուրիշ էութիւնից են եղած, և կամ թէ կարող են փոփոխուիլ և այլայլել: Այսպիսի հերիտիկոսական խօսքեր ասողներին նշովում է պաթողիկէ և Առաքելական սուրբ եկեղեցին:

Իսկ մենք փառաւորում ենք յաւիտենից առաջ եղողին՝ երկրպագելով Ս. Երրորդութեան և մի Աստուածութեան — Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյն՝ այժմ, միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի. Երկնային զօրութիւնքն յաներևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ, խաղաղութեան ձայն հնչեցաւ. սուրբ ողջունիս հրաման տուաւ. թշնամութիւնն հեռացաւ. սէր լընդհանուրս սփռեցաւ: Արդ պաշտօնեա՛յք. բարձեալ զձայն՝ տուք օրհնութիւն ի մի բերան միասնական աստուածութեան որում սրովբէքն սրբաբան:

Գոհանամք զքէն տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ բաշխելով զմարմին և զարիւն ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց:

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառք քո, Օրհնութիւն

ի բարձունս, օրհնեալ որ եկեր և գալոցդ ես անուամբ տեառն: Ո՛վսաննա ի բարձունս:

Տէրունական Մարմինը և փրկչական Արիւնը առաջներս դրած է. երկնային զօրքերն (հրեշտակները) աներևոյթ կերպով երգում են և ասում են առանց հանգստանալու — Սուրբ, Սուրբ, Սուրբ, տէր զօրութեանց:

Քրիստոս մեր մէջ յայտնեցաւ, Որ էնն Աստուածն այստեղ (սեղանի վրայ) բազմեցաւ. խաղաղութեան ձայն լսուեցաւ. սուրբ ողջոյնի հրաման տուեցաւ. եկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժողովը) մի սիրտ — մի հոգի դարձաւ և այս ողջոյնի համբոյրը՝ միութեան կապ եղաւ, թշնամութիւնը հեռացաւ. Քրիստոսի սէրն ամենիս մէջ տարածեց: Ուրեմն, ո՛վ պաշտօնեաներ, ձայներդ բարձրացնելով՝ միաբերան օրհնութիւն տուէ՛ք միասնական Աստուածութեանը, որին Սրովբէները փառաբանում են:

Շնորհակալ ենք քեզանից, ո՛վ Տէր, որ մեզ կերակրեցիր քո անմահական սեղանիցդ, բաշխելով քո Մարմինն ու Արիւնը՝ աշխարհի փրկութեան և մեր անձին կեանք լինելու համար:

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, երկինքը և երկիրը լիքն են քո փառքերով: Օրհնութիւն լինի բարձրումը. Օրհնեալ ես որ եկար և պիտի գաս Տիրոջ անունով: Ո՛վսաննա բարձրումը:

Յ Ա Ն Կ

§	Երես
1. Ղաղարոսի յարուժիւնը	5
2. Տասն կոյսեր	8
3. Յիսուսի մատնուժիւնը	11
4. Ոտնալուսյ	13
5. Յիսուսի թաղումն	14
6. Յիսուսի յարուժիւնը	16
7. Յիսուսի համբարձումն	18
8. Հոգեգալուստ	19
9. Վերափոխումն	23
10. Աբգար թագաւորը դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ	25
11. Թադէոս և Բարդուղիմէոս	27
12. Ս. Գրիգոր (կամ Երկրորդ) Լուսաւորիչ	30
13. Հռիփսիմեան և Գայիանեան կոյսերը փախչում են Հայաստան	35
14. Ս. Գրիգորին դուրս են բերում վիրապից	38
15. Ս. Գրիգոր Լուսաւորչի երազը	42
16. Էջմիածնի տաճարի շինուժիւնը	44
17. Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հաւատոյ հանգանակը	46
18. Պատարագի երգեր	50



ՀՀ Ազգային գրադարան



NL0157412

ԻՄ ԱՅԽԱՏԱՅԻՐՈՒԹԵԱՐԻ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ
կրօնուսոյցների համար. հին-ուստի նիւ-
թի մշակութեանը 1 75
 2. ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ
կրօնուսոյցների համար. նոր-ուստի
նիւթի մշակութեան ա. մասն. 1 —
 3. ՄԻՔԱՆԻ ԽՕՍՔ հայ կրօնուսոյց-
ների — 10
 4. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին
ուստի — 40
 5. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ նոր
ուստի — 40
 6. ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ ա. տարի. — 15
 7. ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ, բ. տարի. — 20
 8. ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ, գ. տարի. — 30
2. 3. 5. 6. 7. 8. գրքերից մեկ գինով
10-ից աւելի գնողին և կանխիկ վճարողին 20⁰/₀
զեղում կընեն:

Հասցեն—1) Тифлисъ: Священнику Сааку
Саакянцу կամ 2) Центральную книжную тор-
говлю.